

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-40-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 4-րդ մասում՝

1) հինգերորդ պարբերությունը «բաժիններ» բառից հետո լրացնել «և բաժանմունքներ» բառերով.

2) յոթերորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հարկադիր կատարման ծառայության տարածքային մարմիններն են հարկադիր կատարման մարզային բաժինները, ինչպես նաև Երևան քաղաքի տարածքային և մասնագիտացված բաժինները: Մարզային բաժինների կազմում կարող են գործել բաժանմունքներ:»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) «արդարադատության ավագ լեյտենանտ՝ 3 տարի» բառերը փոխարինել «արդարադատության ավագ լեյտենանտ՝ 2 տարի» բառերով.

2) «արդարադատության մայոր՝ 4 տարի» բառերը փոխարինել «արդարադատության մայոր՝ 3 տարի» բառերով.

3) «արդարադատության փոխգնդապետ՝ 5 տարի» բառերը փոխարինել «արդարադատության փոխգնդապետ՝ 4 տարի» բառերով:

Հոդված 3. Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից, կամ

դատապարտվել է անզգույշ հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.»:

Հոդված 4. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասի երկրորդ պարբերությունը «կարգով՝» բառից հետո լրացնել «հարկադիր կատարման ծառայության անձնակազմի համալրման ռեզերվից, իսկ դրա անհնարինության դեպքում՝» բառերով.

2) 5-րդ մասի առաջին պարբերության «(այդ թվում՝ նշված մարմինների նախկին ծառայողները),» բառերից հետո լրացնել «կամ հարկադիր կատարման ծառայության անձնակազմի համալրման ռեզերվում ընդգրկված այն անձինք,» բառերով.

3) 6-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հարկադիր կատարման ծառայությունում ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, այդ թվում՝ կին ծառայողի նախաձննդյան կամ հետձննդյան, ինչպես նաև ծառայողի՝ երեխային խնամելու արձակուրդի դեպքերում նրա պաշտոնը կարող է զբաղեցվել՝ հարկադիր կատարման ծառայության այլ փոխարինող ծառայողին տվյալ պաշտոնին գործուղելով, ինչպես նաև հարկադիր կատարման ծառայության անձնակազմի համալրման ռեզերվից ժամանակավոր փոխարինողի նշանակելով: Ծառայողական քննության ժամանակահատվածում հարկադիր կատարողի լիազորությունները ժամանակավորապես դադարեցվելու դեպքում նրա պաշտոնը կարող է զբաղեցվել՝ հարկադիր կատարման ծառայության այլ փոխարինող ծառայողին տվյալ պաշտոնին գործուղելով:»:

Հոդված 5. Օրենքի 12.1-րդ հոդվածի 1-ին մասի «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով:

Հոդված 6. Օրենքը լրացնել նոր՝ 12.3 հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 12.3. Հարկադիր կատարման ծառայության անձնակազմի համալրման ռեզերվը

1. Հարկադիր կատարման ծառայության անձնակազմի համալրման ռեզերվում (այսուհետ՝ անձնակազմի համալրման ռեզերվ) գլխավոր հարկադիր կատարողի հրամանով ընդգրկվում են՝

1) Սույն օրենքի 12.1 հոդվածով սահմանված կարգով անցկացված մրցույթում հաղթող ճանաչված, բայց պաշտոնի չնշանակված անձինք.

2) Սույն օրենքի 12-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված հիմքերով որպես ժամանակավոր փոխարինող նշանակված ծառայողները՝ նշված հիմքերի վերացման դեպքում համապատասխան պաշտոնի նշանակելու անհնարինության դեպքում,

3) Սույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 11-րդ և 14-րդ կետերով նախատեսված հիմքերով հարկադիր կատարման ծառայությունից ազատված անձինք:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում անձինք անձնակազմի համալրման ռեզերվում ընդգրկվում են վեց ամիս ժամկետով, իսկ նույն մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում՝ անժամկետ, բայց ոչ ավելի, քան մինչև համապատասխան խմբի համար սահմանված ծառայության առավելագույն տարիքի լրանալը:

3. Անձնակազմի համալրման ռեզերվում սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված հիմքերով ընդգրկված անձինք օգտվում են նույն մասի 1-ին կետով նախատեսված հիմքով ընդգրկված անձանց նկատմամբ ծառայության նշանակվելու հարցում նախապատվության իրավունքից:

4. Անձնակազմի համալրման ռեզերվում ընդգրկված անձինք չեն համարվում հարկադիր կատարման ծառայության ծառայողներ:

5. Անձնակազմի համալրման ռեզերվից հանելու հիմքերն են՝

1) անձնական դիմումը,

2) հարկադիր կատարման ծառայությունում պաշտոնի նշանակվելը,

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելը,

4) օրինական ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը,

5) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելը,

6) դատական կարգով հարկադիր կատարման ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկվելը,

7) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով հիվանդանալը, ինչը հարկադիր կատարման ծառայության պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել հարկադիր կատարողի ծառայողական պարտականությունների կատարմանը և լիազորությունների իրականացմանը,

8) անձնակազմի համալրման ռեզերվում առավելագույն ժամկետը լրանալը:»:

Հոդված 7. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 8 Օրենքը լրացնել նոր՝ 23.1-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 23.1 Բաժանմունքի պետի լիազորությունները

1. Բաժանմունքի պետը՝

1) կազմակերպում և վերահսկում է բաժանմունքի աշխատանքները.

2) իրականացնում է սույն օրենքի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջների, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանների և ցուցումների, գլխավոր հարկադիր կատարողի հրամանների, ցուցումների կատարումը:

2. Մարզային բաժնի բաժանմունքի պետն իրականացնում է նաև սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները:»:

Հոդված 9. Օրենքի 34-րդ հոդվածում

1) 1-ին մասը լրացնել 4.1 կետով հետևյալ բովանդակությամբ.

«4.1) տվյալ պաշտոնի համար սահմանված առավելագույն կոչումից մեկ աստիճան բարձր կոչումի շնորհում, եթե կրկնակի լրացել է ունեցած կոչումով ծառայության սահմանված ժամկետը.».

2) 5-րդ մասի առաջին պարբերությունում «4-րդ կետով նախատեսված խրախուսանքի» բառերը փոխարինել «4-րդ և 4.1-րդ կետերով նախատեսված խրախուսանքների» բառերով.

3) 5-րդ մասի երկրորդ պարբերությունում «4-րդ կետով նախատեսված խրախուսանքը» բառերը փոխարինել «4-րդ և 4.1-րդ կետերով նախատեսված խրախուսանքները» բառերով:

Հոդված 10. Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անրաժեշտությունը.

Նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կազմակերպման գործում որոշ խնդիրների, մասնավորապես՝ ծառայության անձնակազմն առավել արհեստավարժ կադրերով համալրելու, ինչպես նաև ծառայողների կարգավիճակը զինծառայությանը հավասարեցված այլ մարմինների ծառայողների կարգավիճակին համապատասխանեցնելու նպատակով:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

Ներկայումս «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» ՀՀ օրենքով հակադիր կատարողի կարգավիճակի որոշ տարրեր պակաս բարենպաստ են ծառայողի համար, քան զինծառայությանը հավասարեցված այլ մարմիններում, ինչը չի նպաստում ծառայությունում աշխատանքի գրավչությանը: Բացի այդ, օրենքով չի նախատեսվում անձնակազմի համալրման ռեզերվի ձևավորում, ինչը փոքրացնում է անձնակազմի արհեստավարժ աշխատակիցներով համալրելու հնարավորությունը:

Կարգավորման նպատակը և բնույթը.

Նախագծով հարկադիր կատարման ծառայությունում կոչումների շնորհման ժամկետները համապատասխանեցվում են զինծառայությանը հավասարեցված այլ մարմիններում սահմանված ժամկետներին, ներդրվում են խրախուսանքի նոր տեսակներ, ինչպես նաև նախատեսվում է անձնակազմի համալրման ռեզերվի ձևավորում, ինչը հնարավորություն կտա ընդլայնել անձնակազմի համալրման հնարավորությունները: Նախագծով հստակեցվում են որոշ այլ կարգավորումներ:

Ակնկալվող արդյունքը.

Նախագծի ընդունման դեպքում կընդլայնվի հարկադիր կատարման ծառայությունն արհեստավարժ կադրերով համալրելու հնարավորությունները, որոշակիորեն կբարձրանա ծառայությունում աշխատանքային գրավչությունը, ինչն էլ դրականորեն կանդրադառնա ծառայության աշխատանքի արդյունավետության վրա:

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱՋԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: